## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
## Վ Ա Յ Ո Ց   Ձ Ո Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

---

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  N 466-Ա**

**«  30  » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ  2024Թ.**

**ՁՈՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն, 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» N1425-Ն որոշումներով, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 378-Ա որոշումը և 2024 թվականի սեպտեմբերի 17-ին Ձոյա Մարտիրոսյանի հետ կնքած ժամկետային աշխատանքային թիվ 37 պայմանագրի 5.1 կետի բ) ենթակետը՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   ԵՄ՝**

1. Դադարեցնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ձոյա Մարտիրոսյանի լիազորությունները: Աշխատանքային վերջին օրը համարել 2025 թվականի հունվարի 3-ը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 3-ից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**